

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի հոկտեմբերի 23-ին, կիրակի օրը, Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը Էջմիածնի Մայր տաճարում սրբալույս մեռոնի օծմամբ եպիսկոպոս ձեռնադրեց Մայր Աթոռի միաբան երեք վիսդապետների՝ համաձայն կարգաց և կանոնաց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու:

Ձեռնադրված հոգևորականներն են՝

1. Տ. ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲՈՒՆԻԱԹՅԱՆ՝ Արգենտինայի հայոց թեմի վրա, իբրև թեմական առաջնորդ, ծնյալ 1946 թ. Էջմիածին քաղաքում:

2. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆ՝ Արարատյան հայրապետական թեմի վրա, իբրև առաջնորդի փոխանորդ, ծնյալ 1951 թ. Էջմիածնի շրջանի Ոսկեհատ գյուղում:

3. Տ. ԱՆԱՆԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԱԲԱՋՅԱՆ՝ Ադրբեջանի հայոց թեմի վրա, իբրև թեմական առաջնորդ, ծնյալ 1951 թ. Երևան քաղաքում:

Ձեռնադրությունը կատարվեց խարտավիլակությամբ Մայր Աթոռի միաբան Տ. Արտեն եպիսկոպոս Բերբերյանի: Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողքին ընթերակա եպիսկոպոսներ էին՝ Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը և Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Ավագ եպիսկոպոս Ասատուրյանը:

Պատշաճ հանդիսավորությամբ տեղի ունեցած սրբական արարողություններին ներկա էին ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանած թեմական իշխանությանց ներկայացուցիչներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ և հավատացյալ ժողովրդի հոծ բազմություն:

Ձեռնադրության արարողությանը ներկա էր նաև Հայկ. ՍՍՀ Մինիստրը-

ների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Հոկտեմբերի 30-ին, կիրակի օրը, նորապսակ եպիսկոպոսները իրենց ուխտի պատարագը մատուցեցին Էջմիածնի Մայր տաճարում և Երևանի Ս. Սարգիս ու Ս. Հովհաննես եկեղեցիներում և հաջորդող օրերին մեկնեցին իրենց թեմերը՝ տանելով իրենց հոտին Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնությունները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից:

Հոկտեմբերի 16-ին, կիրակի օրը, Ամենայն Հայոց Հայրապետի հրամանով Ս. Էջմիածնի Մայր տաճարում, ձեռամբ Մայր Աթոռի դիվանապետ Գերաշնորհ Տ. Ներսես եպիսկոպոս Պոլատյանի, կուսակրոն քահանա ձեռնադրվեցին հոգևոր ճեմարանի ընթացավարտ սարկավագներ Խաչիկ Խարատյանը, ծնյալ 1958 թ. Հալեպ քաղաքում, Սմբատ Արիստակեսյանը, ծնյալ 1959 թ. Էջմիածնի շրջանի Հայթաղ գյուղում, և Վարդան Բաղդասարյանը, ծնյալ 1961 թ. Հրազդանի շրջանի Մեղրաձոր գյուղում՝ վերանվանվելով Տ. Թորգոմ, Տ. Ասողիկ և Տ. Շնորհք կուսակրոն քահանաներ:

Նույն օրը, երեկոյան, Մայր տաճարում ձեռնադրիչ սրբազան հայրը նորընծա Տ. Թորգոմ, Տ. Ասողիկ և Տ. Շնորհք քահանաներին, համաձայն իրենց կատարած ուխտի, աբեղայական վեղարներ շնորհեց:

Թող Տերը քաղցրությամբ ընդունի նորապսակ սրբազան և հոգեշնորհ հայրերի ուխտն ու ընծայումը:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
1 նոյեմբեր 1983 թ.